

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ, ՍՓՅՈՒՇՔԱՅԱՅ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ԲԱՐԵՐԱՐՆԵՐԻ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ  
ԱՐՑԱԽԻ ԱԶԱՏԱԳՐՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ\*

Արարատ Վարդանյան

**Բամալի բառեր՝** Արցախի Հանրապետություն, ազատագրված տարածքներ, հիմնադրամ, սփյուռքահայ կազմակերպություն, անհատ բարերար, բարեգործություն, վերաբերնակեցում, սոցիալ-տնտեսական, առողջապահական, կրթական ծրագիր:

Պատերազմը ժամը հարված էր հասցրել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը: ԼՂՀ-ում տուժել է 149 բնակավայր, լրիվ կամ մասամբ ավերվել են 11647 անհատական տներ, 226 բազմաբնակարան բնակելի շենքեր, 17 ստացիոնար բուժիմնարկներ և 71 բուժկետեր, 196 ուսումնական և մշակութային օջախներ [1], 8000 արդյունաբերական, գյուղատնտեսական և սոցիալական նշանակության օբյեկտներ: Երեք անգամ կրծատվել էին ցանքսերը, 5 անգամ անասնագլխաքանակը:[2] Իրենց մշտական բնակավայրերից բռնագաղթել են ավելի քան 80 հազար բնակչիներ, որից 39 հազարը միայն Մարտակերտի շրջանից: [3]

Հետպատերազմյան տարիներին հնարավորություն ստեղծվեց զրադվելու պատերազմից խիստ տուժած և ազատագրված տարածքների վերաբնակեցման, ավերված տնտեսության, առողջապահական, կրթական, մշակութային օջախների և այլ ոլորտների վերականգնման ու զարգացման հարցերով: Պատերազմից տուժած երիտասարդ հանրապետությունը հնարավորություն չուներ սուր պետական միջոցներով լուծելու իր առջև ծառացած խնդիրները և լինելով չճանաչված պետություն զրկված էր միջազգային ֆինանսական կազմակերպություններից վարկեր ստանալու հնարավորությունից: Այդ առումով անգնահատելի է հիմնադրամների, սփյուռքահայ բարեգործական կազմակերպությունների և միությունների, ինչպես նաև առանձին բարերար մեր հայրենակիցների օգնությունը: Նրանց աջակցությամբ կյանքի են կոչվել ռազմավարական նշանակություն ունեցող շատ ծրագրեր, որորի են կանգնել գյուղեր ու քաղաքներ, կառուցվել և շահագործման են հանձնվել ճանապարհներ, գազատարներ, ջրագժեր, հիվանդանոցներ, դպրոցներ, մանկապարտեզներ և այլն:

Այդ գործում մեծ ավանդ ունի «Հայաստան» համահայկական հիմնադրամը: Հիմնադրամն ստեղծվել է Հայաստանի, Արցախի և Սփյուռքի մեր հայրենակիցների ջանքերով 1992թ. մարտի 3-ին Երևանում որպես հայկական բարեսիրական կառույց: Նրա գլխավոր խնդիրն է համայն հայության ուժերի միասնական գործադրմամբ օժանդակել ՀՀ և Արցախի գորացման ու բարգավաճմանը:

«Հայաստան» համահայկական հիմնադրամն իր ծրագրերն իրականացնում է 25 տեղական մարմինների միջոցով, որոնք գործում են աշխարհի 22 երկրներում: [4] Հիմնադրամի դրամական միջոցները գոյանում են տարեկան հեռուստամարաթոնի, ռադիոմարաթոնի, ճաշկերպույթների հանգանակություններից, բարեգործական համերգների ու ցուցահանդեսների հասուլքներից, փոստային և SMS նվիրատվություններից, ինչպես նաև անհատների բողած կտակներից և նպատակային հատկացումներից: Հիմնադրամը նպատակ ունի հետզհետև լինելայներու նվիրատունների բանակը և հավաքագրված գու-

\* Հոդվածն ընդունվել է 12.12.18:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խնբագրական խորհրդի անդամ պ.գ.դ., պրոֆեսոր Է. Մինասյանը:

Հոդվածը տպագրվում է ԼՂՀ կառավարության կողմից հաստատված Արցախի Գիտական կենտրոնում իրականացվող ՏՏ 16.10-005 գիտական թեմայի շրջանակներում:

## ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2019

մարմերով իրականացնելու հայրենակիցների բարեկեցության ուղղված նոր ծրագրեր:

Հիմնադրամի նվիրատունների թիվն արդեն գերազանցում է 700 հազարը, իսկ հայրենիքում արված ներդրումները՝ 330 միլիոն ԱՄՆ դոլարը (ավելի քան 1100 խոշոր ծրագիր), որի շնորհիվ շուրջ 500 հազար մարդ Յայաստանում և Արցախում մշտապես օգտվում է բարեկարգ ու հարմարավետ դպրոցից, հիվանդանոցից, ճանապարհից, ջրագժիգ: [5] «Երբ մենք հայերս ծեռք-ծեռքի ենք տալիս, - նշում է Հիմնադրամի վերստուգիչ հանձնաժողովի նախագահ Վահե ճագանտարենը, - երբ մեր մեջ միասնականություն է լինում, կարողանում ենք լեռներ շարժել: Հիշենք Սարդարապատի և Ղարաբաղի գոյզ պատերազմները, երբ մեր դիմաց ունենք թվով ավելի մեծ, շատ ավելի լավ զինված թուրք և ազերի բանակներ: Կարողացանք հաղթել: Կարողացանք, որովհետև միաբան և միակամ էնք: Մեր Հիմնադրամի հսկայական և անհավատալի հաջողության պատճառն է նույն է միասնականություն, ծեռք-ծեռքի տալու ցանկություն և կարողություն: Վստահ եմ, որ այդ միասնականությունը պահպանվելու է, և դրա մեջ ամեն հայ գտնելու է իր երջանկությունը»:[6]

«Յայաստան» հիմնադրամն Արցախում սկսել է գործել 1993 թվականից, երբ դեռ շարունակվում էր պատերազմը, և իրականացրել է բազում ծրագրեր հանրապետության գրեթե բոլոր շրջաններում: Լայնածավալ հումանիտար օգնություն է տրամադրվել Լեռնային Ղարաբաղի Յանրապետության կառավարությանը՝ պատերազմից ավելիված բնակավայրերը մաքրելու, գարնան և աշնան գյուղատնտեսական աշխատանքները կազմակերպելու, սերմացու, թունաքիմիկատներ և վարելիք ծեռք բերելու համար: 1996-1997թթ. 2.520.000 դոլար գումար է ներդրվել՝ Լեռնային Ղարաբաղում գյուղատնտեսական աշխատանքներ կազմակերպելու նպատակով: [7]

Հիմնադրամի ծրագրերի ծանրակշիռ մասը իրագործվում է Արցախում: 2009թ. Ստեփանակերտում բացվել է գրասենյակ, որն ակտիվորեն նպաստում է Արցախում իրագործվող ծրագրերի կենսագործմանը: Արցախում իրագործվող Հիմնադրամի ծրագրերը, որպես կանոն, իրականացվում են ԼՂՀ կառավարության համաֆինանսավորմամբ: Փոխազդան այդ սկզբունքը ողջունելի է տեղական մարմների և բարերարների համար: Այդ սկզբունքը 1992-2008 թվականներին Արցախում իրագործվել է 244 ծրագիր, որի համար ծախսվել է ավելի քան 52 մլն ամերիկյան դոլար կամ հայկական 14 մլրդ դրամ: [8]

«Յայաստան» համահայկական հիմնադրամն իր գործունեության 25 տարիների ընթացքում Արցախում իրականացրել է բազմաթիվ և բազմանույթ ծրագրեր գրեթե բոլոր ոլորտներում ծանապարհաշինություն, էելեկտրաֆիկացում, գազաֆիկացում, ջրամատակարարում, բնակարանաշինություն, կրթություն, մշակույթ, առողջապահություն, համայնքային զարգացում և այլն:

Հիմնադրամի միջոցներով պավարտին է հասցել Լեռնային Ղարաբաղը մայր Յայաստանին կապող ռազմավարական և կենսական նշանակություն ունեցող «Գորիս-Ստեփանակերտ» ավտոմայրուղու շինարարության ծրագիրը, որը սկսել է 1995 թվականին և ավարտել 1999-ին: Այն իրավամբ կոչվում է «Կյանքի ծանապարհ»: Ռազմավարական նշանակություն ունի նաև 1999թ. սկսված Արցախի ողնաշարք հանդիսացող «Հյուսիս-հարավ» 170 կիլոմետր երկարությամբ ավտոճանապարհի շինարարության ծրագիրը: ճանապարհը զգվում է Մարտակերտից մինչև Յաղորության մասելով Ստեփանակերտով: Այն հնարավորություն է տալիս ոչ միայն վերականգնելու պատերազմի հետևանքով պայմանագրերը, այլ նաև նպաստում ԼՂՀ տնտեսական վիճակի բարելավմանը:[9] «Հյուսիս-հարավ» ավտոճանապարհի կառուցմանը լուծվեց հանրապետության ներքին հաղորդակցության, իսկ «Գորիս-Ստեփանակերտով»՝ Յայաստանի հետ կապի խնդիրը:

Յայաստանի հետ կապի առումով անգնահատելի է Արցախի հյուսիսով անցնող «Վարդենիս-Սարտակերտ» մայրուղու կառուցումը: 33 մլն դոլար արժողությամբ մայրուղին կառուցվել է «Յայաստան» համահայկական հիմնադրամի հովանավորությամբ, Արցախի և ՀՀ կառավարությունների համաֆինանսավորմամբ: [10] 2017թ. սեպտեմբեր

## ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2019

Իին շահագործման հանձնված 116 կիլոմետրանոց ճանապարհն ունի ոչ միայն ռազմավարական, այլ նաև տնտեսական և գրուսաշրջային նշանակություն:

Դայաստանի հետ կապող «Գորիս-Ստեփանակերտ» և «Վարդենիս-Մարտակերտ» ճանապարհների կառուցումը նպաստում է նաև Արցախի ազատագրված տարածքների վերաբերնակեցմանը, ամրապնդմանը և զարգացմանը, որը ԼՂՀ իշխանությունների առաջնահերթ խնդիրներից մեկն է եղել: Դիմադրամի ծրագրերը բազմաթիվ են Արցախի Դայաստության այս հատվածում: Բացի զարգացման և էնեկտրաֆիկացման աշխատանքներից հիմնադրամը մնեց ավանդ ունի ազատագրված շրջանների ջրանալակարարման համակարգերի կառուցման և վերակառուցման գործում:

Դիմադրամը Քարվաճառ քաղաքում, Արգենտինայի մեր հայրենակիցների նվիրատվությամբ և ԼՂՀ կառավարության համաֆինանսավորմամբ, կառուցել է ուր կիյումնետք երկարությամբ ջրամատակարարման ներքին ցանց և օրական կարգավորման երկու ջրամբար, որն արմատապես փոխել է քաղաքի բնակչությունը: [11] Դիմադրամի ֆինանսավորմամբ իրականացվել է նաև Շահումյանի շրջանի նոր Գետաշեն գյուղի ջրամատակարարման համակարգի շինարարությունը և նոր Կարաչինար գյուղի ջրամատակարարման համակարգի վերակառուցման աշխատանքները: [12]

Բարդ տեղանք ունեցող բերձոր քաղաքում խնելու ջրի պակաս միշտ է զգացվել է: Պատճառը ոչ թե պաշարների սակավությունն է, այլ մատակարարման ենթակառուցվածքների հնությունն ու մաշվածությունը: Քաղաքի բնակչությունը այս խնդիրը լուծելու համար Ռուսաստանի հայ բարերարների նվիրատվությամբ Դիմադրամն իրականացրեց ջրամատակարարման ներքին ցանցի նորացման երկփուլ ծրագիր, որն էականորեն փոխեց իրավիճակը: [13] Այս բոլոր ծրագրերում Դիմադրամի հետ որպես համաֆինանսավորող հանդես է գալիս Արցախի կառավարությունը:

Դիմադրամի կողմից բավականին աշխատանքներ են տարվել առողջապահական գործը առաջ տանելու ուղղությամբ: Նրա և Արցախի կառավարության ջանքերով շահագործման է հանձնվել Կովսական քաղաքի հիվանդանոցի շենքը, որտեղ գործում է նաև «Սոր և մանկան» առողջության պահպանման կենտրոնը: Շարունակվում է Բերձորի բազմաֆունկցիոնալ հիվանդանոցի շինարարությունը:

Դիմադրամի Տորոնտոյի տեղական մարմինը շտապ օգնության մեթենամեր է նվիրել Դադիվանք և Սարադա գյուղերի բուժենությանը: [14]

Առանձնատներ բազմազավակ լնտանիքներին «Աեր տունը» խորագրով Դեռուստամարաթոն 2015-ի հանգանակություններով Դիմադրամը առանձնատներ է կառուցում արցախարնակ բազմազավակ լնտանիքների համար: 2016թ. կառուցվել է 16 տուն, որից Շահումյանի շրջանի Ակնաբերդ համայնքում 1 տուն, Չորեքքարում 2, Քաշարալի շրջանում Բերդիկ, Որոտան, Միրիկ և Վուրգավան համայնքներում մեկական տուն: [15] Որպես ծրագրի համաֆինանսավորող հանդես է գալիս դարձյալ Արցախի կառավալությունը:

Բացի ռազմավարական և կենսական կարևորություն ունեցող ծրագրերից Դիմադրամը իրականացնում է դպրոցների վերանորոգման և կահավորման ծրագիր: Դիմադրամի ֆինանսավորմամբ իրմանանորդվել են Բաշարաղի շրջանի Աղավնո, Աղավնատուն համայնքների դպրոցական շենքերը, կահավորվել Գետափ համայնքի և Շահումյանի շրջանի Քարվաճառ քաղաքի դպրոցները:

Դիմադրամի միջոցներով համակարգային սենյակներ են հիմնվել Քարվաճառի, նոր Վերին Շենի, նոր Բրածուրի, նոր Գետաշենի և Եղեգնուտի միջնակարգ դպրոցներում: [16]

«Անցնող տարիներին, - գրում է Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ, - մենք բոլորս ականատես ենք եղել այն արդյունքներին, որոնք ծեռոք են բերվել «Դայաստան» համահայկական հիմնադրամի իրագործած ծրագրերով: Ականատեսն ենք եղել, թե ինչպիսի կարևորության խնդիրներ են վճռվել Դայաստանի Դանրապետությունում և Արցախում ճանապարհների կառուցմանը, բնակավայրերի բարեկարգումով, տնտեսական և մշակութային կյանքի վերակառուցման ծրագրերով: Մեր միասնականության

## ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2019

արգասիքն են դրանք՝ առ Հայրենին մեր սիրո, մերծավորի հանդեպ հոգածության»:[17]

Արցախի ազատագրված տարածքներում մեծածավալ աշխատանքներ է իրականացնում «Թուֆենկյան» բարեգործական հիմնադրամը (ԹԲՀ): Հիմնադրամը (անգլերեն՝ *Tufenkyan Foundation*) հիմնվել է 1988թվականին Նյու-Յորքում՝ ամերիկահայ գործարար և բարերար Զեյմս Թուֆենկյանի կողմից: Նպատակ ունենալով բարեգործական ծրագրեր իրականացնել հայրենիքում՝ 1999թ. Երևանում հիմնադրվեց «Թուֆենկյան» հիմնադրամի գրասենյակ: Հիմնադրամը ՀՀ-ում իրականացրել է մի քանի տասնյակ բարեգործական ծրագրեր:

Արցախին օգնելու նպատակով 2003թ. բացվում է «Թուֆենկյան» հիմնադրամի Ստեփանակերտի գրասենյակը, որի միջոցով իրականացվում են վերաբնակեցման, սոցիալ-տնտեսական, առողջապահական, կրթական և այլ բարեգործական ծրագրեր:

Վերաբնակեցման ծրագիրը ԼՂՀ-ում սկսել է կենսագործվել 1993թվականից, որը սկզբում կարգավորվում էր Հայաստանի Հանրապետության, իսկ հետագայում՝ ԼՂՀ - կառավարության համապատասխան որոշումներով:[18] Վերաբնակեցումը համագույն ռազմավարական կարևորագույն խնդիր է: Սեծ ուշադրություն դարձնելով դրան՝ «Թուֆենկյան» հիմնադրամի կողմից մեծածավալ աշխատանքներ են կատարված Արցախի ազատագրված, սահմանամերծ շրջանների վերաբնակեցման ուղղությամբ, ստեղծվում են աշխատատեղեր՝ հայության արմատներն իր հողում ամրապնդելու համար: Հիմնադրամի տնօրեն Զեյմս Թուֆենկյանի կարծիքով՝ «...Վերաբնակեցման խնդիրն այսօր ոչ միայն ԼՂՀ իշխանությունների, այլ սփյուռքի բարեգործական կազմակերպությունների, Արցախի ճակատագրով մտահոգ հանայն հայության մտահոգություններից մեկը պետք է դառնա: Չնայած մեր կառույցը նպաստում է նաև երկրում կրթամշակութային մի շարք ծրագրերի իրականացմանը, աջակցում է տաղանդավոր երեխաների գարգացմանը ցուցաբերելով բարոյական և նյութական օժանդակություն, սակայն մեր առաջնահերթ խնդիրը մնում է վերաբնակեցման ռազմավարությունը»:[19]

Այդ ուղղությամբ կատարած առաջն խոչըն քայլերից մեկը Հադրութի շրջանի նորակառույց Արաջանուղ գյուղի հովանավորչական ծրագիրն է, որը համահունչ է ԼՂՀ իշխանությունների Վարած քաղաքականությունը: Արաջանուղը հիմնադրվել է 2005թ. «Թուֆենկյան» հիմնադրամի հանգանակած միջոցներով: Գյուղում կառուցված տասնութ տուն բնակեցված է: Բնակիչների մի մասը փախստական է Աղբեջանից, մի մասն այնտեղ է տեղափոխվել Հայաստանից, մյուս մասն էլ՝ Ղարաբաղի տարրեր բնակավայրերից, որոնց տները պատերազմի տարիներին ավերվել են: Նորակառույց տները հարմարավես են: Յուրաքանչյուր առանձնատուն ունի երեք ննջասենյակ, ընդարձակ հյուրասենյակ, ինչպես նաև խոհանոց, բաղնիք և սանհանգույց: Լուծված է շուրջօրյա ջրամատակարարման հարցը: Բոլոր բնակիչներն էլ ունեն իրենց տնամերձ հողամասն ու այգին, օժանդակ տնտեսությունը, ապահովված են անասուններով, թթուններով: [20] Գյուղն ապահովված է էլեկտրականությամբ: Կառուցվել է գյուղապետարանի շենք, դպրոց և բուժկետ: 2017-ին հիմնադրամը շահագործման է հանձնել վեց նոր բնակելի տուն:

Արաջանուղ գյուղը 2008 թվականին կազմավորվել է որպես առանձին համայնք իր մեջ ներառելով Արաջանուղ և Արաքսավան բնակավայրերը: Արաքսավան գյուղը հիմնադրվել է 2014 թվականին: Արաջանուղ համայնքի կազմում ընդգրկվելը լայն հեռանկարներ է բացել նրա գարգացման համար: Հովհանուշը ծգվում է մոտ 110կմ ներառելով Քաշաբաղի և Հադրութի հարավային թևերը:

Արցախի Հանրապետության իշխանությունների, «Թուֆենկյան» հիմնադրամի այս

\* Մանրամասը տե՛ս «Թուֆենկյան» բարեգործական հիմնադրամի (ԹԲՀ) աջակցությունը Արցախի Հանրապետության ազատագրված տարածքների գարգացման գործում, ԱրՊՀ «Գիտական տեղեկագիր», պրակ1, Ստեփանակերտ, 2018, էջ 128-134:

## ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍՏԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2019

ծրագիրն ունի ռազմավարական կարևոր նշանակություն, որի նպատակն է ամրապնդել հանրապետության հարավային սահմանը և զարկ տալ գյուղատնտեսությանը: Սակայն մնան ծրագրերը անհնարին է իրականացնել միայն Արցախի պետական բյուջեի միջոցներով: Անհրաժեշտ է ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ Սփյուռքի մեր հայրենակիցների աջակցությունը:

Վերաբնակեցման ծրագրի շրջանակներում 2008 թվականից ԹԲՀ-ի կողմից իրագործվում է Քաշարադի շրջանի վերաբնակիցների տների վերանորոգման համար շինանյութի տրամադրման և դրանց նպատակային օգտագործման վերահսկման ծրագիրը: 2008-2013 թվականներին Քաշարադի շրջանի 7 համայնքների 47 ընտանիքների տրամադրվել են հանրապետական շինանյութեր: [21] Պատրաստի տներ են տրամադրվել մի քանի վերաբնակիչ, Արցախի վիրավոր գինծառայողների և քազմազավակ ընտանիքների:

2011թ. Հիմնադրամը ԼՂ կառավարության հետ համատեղ վերանորոգեց Կովսականի քազմաբնակարան մի շենք և 7բնակարան տրամադրեց Սիրիայից տեղափոխված մեր հայրենակիցներին:[22] ԹԲՀ-ը սիրիահայերի համար շահագործման է հանձնել մի քանի տներ Գետամեծ և Վան գյուղերում, վերանորոգել է Իշխանաձոր գյուղում հաստատված սիրիահայ և լիրանանահայ ընտանիքների բնակարանները:

Հիմնադրամն աշխատանքներ է տանում վերաբնակեցված գյուղերի ամրապնդման և զարգացման ուղղությամբ: Նրա կողմից իրականացվում է խաղողի այգիների վերականգնման ծրագիր Հարավային Քաշարադի Ազգեհովիտ և Ուրեկան գյուղերում: Ազգիները վերականգնելուց և ծախսերով փակելուց հետո, ըստ կազմած պայմանագրի, դրանք վերադարձնելու են համայնքի անդամներին: Ազգիներում աշխատող գյուղացիները ստանում են աշխատավարձ: Հիմնադրամի միջոցներով Ազգեհովիտ գյուղում կառուցվել է ալրադաց, որը սպասարկում է շրջակա մոտ 20 գյուղերի բնակչների: Հարավային Քաշարադում շարունակվում են 2005 ու 2007թթ. սկիզբ առած «Ալրադաց» և «Տեխնիկական բազա» գյուղատնտեսական ծրագրերը, որոնք խթան են հանդիսացել հացահատիկային արտադրության բնագավառի զարգացման համար:

Հարրութի շրջանի Արաջանուղ գյուղի վերաբնակիցներին աշխատատեղերով ապահովելու նպատակով ԹԲՀ 2005թ. ստեղծել է 5հա նորան այգի: Քաշարադի շրջանի Երիշվանք գյուղի վերաբնակիցների համար 2013թ. հիմնվել է 7հա նորան այգի, կառուցվել է երկու ջերմոցային տնտեսություն՝ յուրաքանչյուրը 240քառ.մ. մակերեսով: [23] Նոյն շրջանի Վան համայնքում 2018թ. գարնանը հիմնվել է 5 հա արքայանարդինջի այգի, տմկվել է շուրջ 2500 տմկի: [24] Հիմնադրամը վերաբնակիցներին տրամադրում է նաև ցածր տոկոսադրույքով վարկեր: Վարկերի համար տրամադրված գումարները են ստանալով՝ օգտագործվում են հետագա ծրագրերի ընդլայնման համար:

Քաշարադի շրջանում Հիմնադրամն իրականացնում է առողջապահական ծրագրեր: 2005թ. Իշխանաձոր գյուղում կառուցել է բժշկական համալիր, որը կարող է սպասարկել 2000 բնակչի: [25] Կառուցվել և հիմնանորոգվել են շրջանի Մշենի, Աղավնատուն, Սոշարադ, Խաչգետիք գյուղերի բուժկետերը, ապահովվել բժշկական պարագաներով ու սարքավորումներով:

ԼՂ առողջապահության նախարարության հետ համագործակցելով՝ ԹԲՀ կազմակերպել է շարժական լիլինիկայի ուղևորություններ Քաշարադի և Շահումյանի շրջանների գյուղերը, անցկացրել հետազոտություններ:

Հիմնադրամի ֆինանսավորմամբ նորոգվել է Քաշարադի շրջանի Աղավնատուն, Շոշանց և Գետավի գյուղերի դպրոցները, կապիտալ վերանորոգվել է Մոշարադ համայնքի մանկապարտեզը:

Այսօր էլ «Թուֆենկյան» բարեգործական հիմնադրամը շարունակում է ազգօգուտ գործունեությունը՝ նպաստելով Արցախի Հանրապետության ազատագրված տարածքների զարգացմանը սոցիալ-տնտեսական, առողջապահական, կրթական և այլ բնագավառներում:

## ՄԵՐՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2019

Արցախի Հանրապետության ազատագրված տարածքների գյուղատնտեսության զարգացման և վերաբնակեցման կարևոր ծրագրերի է իրականացնում 2009թ. լիբանա-նահայ գործարարների կողմից հիմնադրված «Արի» (Artsakh Roots Investments) մերդ-րումային հիմնադրամը: Կազմակերպությունը գրանցված է Կիպրոսում, բայց գործարարների մեծ մասը լիբանանահայ է, կան գործարարներ ԱՍՍ-ից, Ֆրանսիայից, Մեծ Բրիտանիայից, Կիպրոսից, ավելի ուշ մասնակիցներն են ներգրավվել Արցախից և Հայաստանի Հանրապետությունից: Հիմնադրամի գլխավոր նպատակն Արցախի Քաշարադի և Նոր Շահումյանի շրջանների գյուղատնտեսության, գյուղական բնակավայրերի զարգացումն է և ժողովրդագրական իրավիճակի բարելավումը:

«Արի»-ն (Արցախ Ուլուր Ինվեստմենթ)-ի «Արցախի արնատներ» հապավումն է, որ պատահաբար, կամ գուցե ոչ պատահաբար հայերեն այս ծրագրի ողջ իմաստն է ամբողջացնում: Նախաձեռնող խմբի կորիզը լիբանանահայ գործարարներն են: Նրանցից շատերն Արցախին ծանոթացել են ավելի վաղ՝ Լիբանանի «Արցախ» հիմնադրամի աշխատանքների ընթացքում: Ի տարրելություն նախորդների «Արի»-ն ոչ թե բարեգործական, այլ գործարար ծրագիր է, որն իր արտոնյալ պայմաններով շահառուներին սեփական բարեկեցությունն ապահովելու հնարավորություն է տալիս: Ներդրողները տվյալ դեպքում «Արի» ծրագրում ընդգրկված գործարարները, Արցախի կառավարության երաշխավորությամբ հավաքագրած գումարները տրամադրում են Արցախի «Գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամին»՝ 3 տարի ժամկետով, տարեկան 9 տոկոս տոկոսադրույթով: Հիմնադրամն ստանձնել է 9 տոկոսից 3-ի վճարումը և 1-1,5 մլն դրամի անամսապարկերը շահառուներին տրամադրում է ավելի մեղմ պայմաններով՝ 6 տոկոս տոկոսադրույթով և 5 տարի ժամկետով: [26]

Հիմնադրամը Արցախի Հանրապետության կառավարության հետ կնքված պայմանագրի համաձայն և նրա երաշխավորությամբ, Շահումյանի և Քաշարադի շրջանների բնակչներին տրամադրել է ցածր ու մատչելի տոկոսադրույթներով փոքր գյուղատնտեսական վարկեր անամսապահության հողագործության զարգացմանը նպաստելու նպատակով: Ներդրումային կազմակերպությունը՝ 2010-2016թթ. վերոնշյալ շրջաններում շուրջ 3,5 մլն դրամի ներդրումներ է իրականացրել: Տրամադրած վարկային միջոցներից օգտվել է ավելի քան հազար ընտանիք, շրջաններում աճել է խոշոր եղանակով անաստների, եռապատկել է մանր եղանակով անաստների գլխաքանակը, մշակված տարածքները նույնպես եռապատկել են: [27]

Գյուղատնտեսության ոլորտում կատարվող ներդրումներին գուգահեռ «Արի» հիմնադրամը Արցախի կառավարության հետ համատեղ ձեռնամուխ եղավ նաև Քաշարադի շրջանում ռազմավարական նշանակություն ունեցող բնակարանաշինության ծրագրի լուծմանը:

Ծրագրին սկսվեց Գորիս-Բերձոր մայրուղու վրա գտնվող Աղավնո համայնքից: Կառավարության, Արցախի «Ներդրումային հիմնադրամի» և «Արի» ընկերության միջև կնքված համաձայնագրի հիման վրա նախաձեռնվեց Քաշարադի շրջանի Աղավնո գյուղում նոր բնակելի թաղանասի կառուցում: Պատվիրվեց 150 բնակելի առանձնատներով թաղանասի նախագիծը: Ծրագրի առաջին փուլում նախատեսված էր կառուցել 50 բնակելի տուն, որոնցից 25-ը մեկ հարկամի 3 սենյականոց, 25-ը՝ ծեղմահարկով՝ 4 սենյականոց: Առաջին փուլի 50 առանձնատների կառուցման պայմանագրային արժեքը կազմում է 1.111.181 մլն դրամ, որից 924, 181 մլն դրամը պետք է տրամադրի «Արի» ընկերությունը: [28] Ընդհանուր բարեկարգման և ենթակառուցվածքների կառուցման աշխատանքների համար պահանջվող մոտ 500 մլն դրամ գումարը ևս կհատկացնի ԼՂՀ կառավարությունը: [29] Ծրագրված է, բացի բնակելի տներից, կառուցել նաև գյուղապետարան, մանկապարտեզ, ջերմոց, ձկնարուծարան և խաղահրապարակներ:

«Մեր նպատակը ոչ թե ներդրումների միջոցով շահույթ ակնկալելն է, թեև դա էլ չի բացառվում, - նշում է «Արի» ընկերության գործադիր տնօրեն Բենիամին Բջջաբեյյանը, - այլ շրջանների վերաբնակեցումը, մարդկանց համար աշխատանքի և բնակելի պայմանների ստեղծումը»:[30]

## ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2019

Թաղամասի կառուցումը սկսվեց 2013 թվականից և շահագործման հանձնվեց 2016թ. մեպտեմբերին: Աղավնո համայնքի ավագանու որոշմամբ նորաստեղծ թաղամասի երկու փողոցներն անվանակոչվել են Արցախյան պատերազմում նահատակված սիյուռքահայ Վիգեն Զաքարյանի և Սիեր Զուլիհաջյանի անուններով:

«Արի» հիմնադրամի կողմից կատարվող աշխատանքներին ծանոթանալու նպատակով այդ ընկերությունում ներդրում կատարած գործարարները հաճախ են լինում ԼՂԴ-ում և համոզվում, որ Արցախը տնտեսականորեն գրավիչ և բիզնեսի համար նպատակահարմար երկիր է: Այսօր էլ այս ծրագրերը շարունակվում են:

Քաշարադի շրջանում հայրենանվեր գործունեություն է ծավալում «Գուրգեն Մելիքյանի Քաշարադի բազմազավակ» ընտանիքների հիմնադրամը»: Հիմնադրամը ստեղծվել է 1993-ին շրջկենտրոն Բերձորում վարչակազմի ղեկավար Ալեքսան Շակորյանի նախաձեռնությամբ, Երևանի պետական հանալսարանի արևելագիտության ֆակուլտետի ղեկան, պրոֆեսոր Գուրգեն Մելիքյանի ակտիվ մասնակցությամբ՝ նպատակումնամարդ բարեգործությամբ նպաստել ազատագրված տարածքի բնակեցմանը և բնակչության կենսապայմանների բարելավմանը: Հիմնադրամը հրատարակում է «Քարեգործ» պաշտոնաթերթը:

Հիմնադրամի միջոցները գոյանում են հիմնականում սիյուռքում բնակվող մեր հայրենակիցների ֆինանսական օժանդակությամբ և Գուրգեն Մելիքյանի մեջ հայրենասերի անձի նկատմամբ ունեցած վստահության շնորհիվ: Գուրգեն Մելիքյանը հիմնադրամի գործադիր տնօրենն է:

Սիյուռքահայ մեր հայրենակիցների նվիրատվությամբ Քաշարադի շրջանում կյանքի են կոչվել բազմաթիվ ծրագրեր: Մի քանի տարի շարունակ հիմնադրամի կողմից կաթ և թիսվածք են բաժանվել Բերձորի և շրջակա գյուղերի դպրոցականներին, մանկապարտեզի սաներին, դպրոցներին տրվել են գրենական պիտույքներ, դասագրքեր, բուհերում սովորող մի քանի տասնյակ կարիքավոր ընտանիքների երեխաններին ֆինանսական աջակցություն:

«Գուրգեն Մելիքյանի Քաշարադի բազմազավակ» ընտանիքների հիմնադրամ»-ը պարբերաբար ֆինանսական օգնություն է ցուցաբերել Արցախյան պատերազմի 1-ի խմբի հաշմանդամներին և կարիքավոր ընտանիքներին: [31] Բարեգործական կազմակերպությունը 2013թ ապրիլին բազմազավակ և սիրիահայ ընտանիքներին տրամադրել է հինգ տոննա սննդամթերթ: [32] Միաժամանակ սննդի տեսքով օգնություն է ուղարկել Քարվածար քաղաքի բնակիչներին: Այն բաժանվել է բոլորին անկախ սոցիալական վիճակից: [33]

Բերձոր շրջկենտրոնի և Քաշարադի հեռավոր գյուղերի բազմազավակ ընտանիքներին տրամադրվող տարատեսակ օգնություններից բացի վերջերս մեծ ծավալ են ստացել խոշոր եղջերավոր անասունների կաթնատու կովերի անհատույց հատկացումը: Նորագործության խորհրդի որոշմամբ կովեր տրվում են բազմազավակ ընտանիքներին բայց երեխանների քանակի 4 երեխա ունեցող ընտանիքներին տրվում է մեկ կով, 6 երեխա ունեցողներին երկու կով, իսկ 7 և ավելի երեխա ունեցողներին երեք կով: [34]

Մեծ է հիմնադրամի դերը Բերձորի Սուլը Շամբարձման եկեղեցու կառուցման, Շինունակավաճքի Սուլը Գևորգ տաճարի վերականգնման, որոշ դպրոցների վերանորոգման գործում: [35] Շրջանի Գողթանիկ համայնքի դպրոցը շուրջ քառորդ դար սպասումներից հետո մշտական ջուր ունեցավ ԱՄ-ում գործող «Գարուն» բարեգործական կազմակերպության (հիմնադիր նախագահ՝ Սերոժ Մելքոնյան, այժմյան նախագահ՝ Ֆլորա Սարյան) տրամադրած միջոցներով և գ. Մելիքյանի ղեկավարած հիմնադրամի ջանքերով: [36]

Հիմնադրամի ծրագրերի մաս է կազմում նաև գրատպությունը: Հիմնադրամը ավելի քան 27 գիրք է տպագրել՝ գրականության, լեզվի, պատմության, Արցախյան ազատամարտի վերաբերյալ, Արցախ Բունիաթյանի գրքերից մեկ հատորը: [37]

Շուրջ երկու տասնամյակ է, որ Գուրգեն Մելիքյանը կազմակերպում է ծառատունկ շրջկենտրոն Բերձորում, որին կարևոր մասնակցություն են ունենում Երևանի պետա-

## ՄԵՍՐՈՒԹ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱԼԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2019

կան համալսարանի ղեկավարությունը և ուսանողությունը: Այդ նախաձեռնության արդյունքում շրջկենտրոնում ստեղծվել են պուրակներ՝ նվիրված Մոնթե Մելքոնյանին, Ստեփան Ալաջաջյանին, բարոնուհի Թոքսին, Երևանի պետական համալսարանին, Արցախյան շարժման 30-ամյակին:

2013թ. նոյեմբերին ծառատունկ է կազմակերպվել նաև Քաշարաղի շրջանի հարավում գտնվող Կովսական քաղաքում: ԵՊԴ ուսանողները, առաջին անգամ լինելով Կովսականում, հանդիպել են Թաթուլ Կրպեյանի անվան դպրոցի ուսուցիչների և աշակերտների հետ, նրանց համար բերել էին համակարգիչ, գրեք և գրենական պիտույքներ: «Գուրգեն Սելիքյանը՝ Քաշարաղի բազմազավակ ընտանիքներին» հիմնադրամի կողմից ուղարկվել էր հումանիտար օգնություն մոտ 2 տոննա բրինձ: [38]

Դիմնադրամի բարեգործական աշխատանքները լրացրանվում են «Բարեգործ» պաշտոնաթերթի համարներում:

Արցախի Հանրապետության ազատագրված շրջաններում 2006թ. ակտիվ գործունեություն է ծավալում Լիքանանի ՀՅԴ կառույցի «Արցախ Ֆոնդ» բարեգործական կազմակերպությունը: «Արցախ Ֆոնդ»-ը ԼՂՀ իշխանությունների հետ գործակցությամբ 2007թ. սկսել է «Նոր կյանք, նոր հույս» ծրագիրը, որի հիմնական նպատակն է օգնել Արցախի, հատկապես ազատագրված և վերաբնակեցվող տարածքների երեք և ավելի երեսա ունեցող ընտանիքներին, իրենց դիմումի համաձայն, անհատույց տրամադրել կրան կով երեք տարի այն չմորթելու և չվաճառելու պայմանով: [39]

2007-2014թթ. ծրագրի նաև նաև կիցները Քաշարաղի և Շահումյանի շրջանների բնակչությանը բաժանել են 800 կրան կով: [40] 2015-ին կով, մանր եղջերավոր անասուններ, մեղվակինքականներ են ստացել (ընտանիքների ցանկությամբ) 165 ընտանիք, որից 107-ը Քաշարաղի շրջանում, 58-ը մյուս ազատագրված և վերաբնակեցված շրջաններում: [41] 2016-ին այդ ծրագրից օգտվել են 152, իսկ 2017-ին 110 ընտանիքներ: [42] «Նոր կյանք, նոր հույս» ծրագիրը կարևոր նշանակություն ունի ազատագրված և վերաբնակեցվող շրջանների հնչյան ծնելիության խթանման, ժողովրդագրական իրավիճակի բարելավման, այնպես էլ հանրապետության տնտեսության զարգացման համար:

Բացի անասուն հատկացնելուց «Արցախ Ֆոնդ»-ը իրականացնում է նաև «Գույք Արցախի դպրոցներին» ծրագիր՝ դպրոցներին հատկացնելով գույք և համակարգիչներ: Սու 10 դպրոց, այդ թվում նաև Քաշարաղի շրջանի Կովսական քաղաքի Թաթուլ Կրպեյանի անվան միջնակարգ դպրոցը, արդեն ունեն համակարգչային կարինետ: [43] «Արցախ Ֆոնդի» ֆինանսավորմամբ ժամանակակից համակարգչային դասարան է բացվել Շահումյանի շրջանի Քարվաճառ քաղաքի դպրոցում, կահավորվել է Նոր Գետաշեն գյուղի դպրոցը, որը իրանի Սպահան քաղաքի հայկական միության օժանդակությամբ շահագործման է հանձնվել 2005 թվականին:

Համագործակցելով Արցախի կրթության, գիտության և սպորտի ու պաշտպանության նախարարությունների հետ՝ յուրաքանչյուր տարի լիքանանահայ մի քանի տասնյակ դպրոցականներ են մասնակցում «Ասպետ» ռազմանարգական ճամբարին: Այստեղ Լիքանանից եկած հայ տղաները ծանոթանում են արցախցի իրենց հասակակիցների հետ, ընկերանում, այցելում են Արցախի տարբեր վայրեր, ճամաչում հայրենիքը:

«Արցախ Ֆոնդի» աջակցությամբ Կովսականում գործում է «Կանանց ծեռագործական միությունը», շնորհիվ որի ավելի քան երկու տասնյակ կին ապահովվել են աշխատանքում: Կազմակերպության հատկացրած նյութերով կանայք ծեռքի աշխատանքներ են ստեղծում, որոնք Լիքանանում հանվում են ցուցահանդես – վաճառքի, և գումարը հատկացվում է նրանց: Բացի այս ամենից՝ «Արցախ Ֆոնդ» Կովսականում գործող «Թաթուլ» ազգագրական երգի-պարի համությին հատկացրել է միկրոպավորուս, երաժշտական սարքավորումներ: [44] «Արցախ Ֆոնդի» ներկայացուցիչները հաճախ են լինում Արցախում իրականացնելու նոր հատկացումներ և նախորդ տառվա ծրագրերի ստուգումներ: Կազմակերպության ծրագրերը բազմազան են և շարունակական բնույթ են կրում:

«Հայ օգնության միությունը» հիմնադրվել է ԱՄՆ-ի Նյու Յորք քաղաքում, ՀՅԴ գործիչ Է.Ակնունու (Խաչատրու Մալումյան) ջանքերով, ԱՄՆ-ի հայ կանանց տարբեր կազ-

## ՄԵՄՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍՏԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2019

մակերպությունների միավորմամբ և կոչվել է ՀՅԴ Կարմիր խաչ: 1946թ-ի պատգամավորական ժողովի որոշմամբ կազմակերպությունը վերանվանվել է Խայ օգնության միության (ՅՕՄ, անգլերեն Armenian Relief Society):[45] «Խայ օգնության միությունը» ոչ կառավարական, ոչ դավանական կանանց բարեգործական կազմակերպություն է, որը հիգում է հայ ժողովրդի կարիքները կամավոր, մարդասիրական և ընկերային հիմունքներով: 1998թ. ՍԱԿ-ի տնտեսական և սոցիալական խորհրդի(ECOSOC) լիիրավանդամ է:

ՅՕՄ-ի գործունեությունն ընթացել է առողջապահական, սոցիալական և կրթական ոլորտներում: Կազմակերպությունն աշխարհի 27 երկրներում ունի 209 մասնաճյուղ: ՅՕՄ-ի կենտրոնական գրասենյակը գտնվում է Ուրբերթառունում (ԱՄՆ, Բոստոն):[46]

Խայաստանում ՅՕՄ-ը սկսել է աշխատել 1988թ. Երկրաշարժից անմիջապես հետո՝ օգնություն կազմակերպելով տուժած շրջանների բնակչությանը: «Խայ օգնության միությունը» Երևանում գրանցվել է 1991թ. և գործում է ՀՅ տասնյակ քաղաքներում ու գյուղերում, իրականացնում բազմաթիվ բարեգործական ծրագրեր:

Արցախահայությանը օգնելու նպատակով 1996թ. Ստեփանակերտում բացվում է «Խայ օգնության միության» Արցախի մեկուսի մասնաճյուղը՝ իրագործելով Ակնունու Երազանքը «Դեպի Երկիր, միշտ դեպի Երկիր»: ՅՕՄ-ի կենտրոնական վարչության, տարբեր երկրներում գործող միավորների և ամեատ բարերարների ֆինանսավորմամբ կազմակերպությունը Արցախում իրականացնում է բարեգործական ծրագրեր սոցիալական, առողջապահական և կրթական ոլորտներում:

Խաչվի առնելով Երեխանների նախադպրոցական կրթության կարևորությունը՝ ՅՕՄ-ի Արցախի մասնաճյուղը ստանձննել է թվով 8 «Սուսե» մանկապարտեզմերի հովանավորության գործը, որից 2-ը գործում են ԱՅ ազատագրված տարածքներում: ՅՕՄ-ի Արցախի մեկուսի մասնաճյուղի ֆինանսավորմամբ «Սուսե» մանկապարտեզ է գործում Շահումյանի շրջանի Ականաբերդ գյուղում: Բարերարներ Արմեն Թոփուլյանի, տեր և տիկին Աղապայանների հովանավորությամբ 2006թ. գործում է Քաշարադի շրջանի Քարեգագահում կառուցվել է ժամանակակից խաղահրապարակ:

Մանկապարտեզմերում մեծ ուշադրություն է դարձվում Երեխանների նախադպրոցական կրթության ու հայեցի դաստիարակությանը: Մանկապարտեզմերի բացումը նպաստում է նաև տեղերում բնակչության համար աշխատատեղերի ստեղծմանը:

Միրիայում ընթացող պատերազմի հետևանքով Արցախում, մասնավորապես Քաշարադի շրջանում Կովսականում, Բերձորում, Իշխանաձորում, բնակություն են հաստատել սիրիահայերի շուրջ երեք տասնյակ ընտանիք, որոնք հիմնականում գրաղվում են հողագործությամբ: LՂԴ կառավարությունը, շրջվարչակազմը հնարավորինս ամեն ինչ անում են, որպեսզի Արցախ տեղափոխված սիրիահայերի կենցաղային պայմանները բարեխավեն և ստեղծվեն պայմաններ ապրելու համար: Նրանց համար կառուցվել են բնակարաններ, շինանյութ է տրամադրվել բնակարանային պայմանների բարելավման համար:

Արցախի ՅՕՄ-ի մեկուսի մասնաճյուղը նույնպես նախաձեռնել է օգնել սիրիահայ ընտանիքներին հաստկանեն այդ ընտանիքների Երեխաններին: Արցախում գործող բոլոր «Սուսե» մանկապարտեզմերը ողջունեցին այդ նախաձեռնությունը, պատրաստականություն հայտնեցին մասնակցել այդ ծրագրին: «Սուսե» մանկապարտեզմերի աշխատողների, մանկապարտեզմերի սաների և նրանց ծնողների համատեղ ուժերով պատրաստվել են ծանրոցներ սիրիահայ ընտանիքների համար: Այս ծրագրին մասնակցել է Աշան գյուղի ոչ միայն «Սուսե» մանկապարտեզը, այլև ամբողջ գյուղը: Ծրագրին ներգրավվել է նաև Շուշիի «Ս. Խանդամիրյանի» անվան թատրոնը, որը բարեգործական հիմնաքններով Երկու ներկայացում պատրաստեց Կովսականում բնակվող Երեխանների համար: [48]

Արցախի ազատագրված տարածքներում ազգանվեր գործունեություն է ծավալում «Խայ կրթական հիմնարկություն»-ը (ՀԿՀ, անգլերեն Armenian Educational Foundation):

## ՄԵՐՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2019

Կազմակերպությունը հիմնադրվել է 1950թ. Լու Անջելեսում ԱՄՆ-ի սփյուռքի այլ գաղութների հայկական դպրոցներին և ուսանողներին նյութական օգնություն ցույց տալու, հայկական դպրոցների ստեղծմամբ օժանդակելու, հայագիտական կազմակերպություններին աջակցելու կրթության համար հատկացված կտակները գործադրելու նպատակով։ Դիմանադիրներն են ամերիկահայ համայնքի ներկայացուցիչներ Արշակ Տիգրանյանը, Շերի Քարեյանը, Բեն Դավարյանը, Մարտ Փիլոյանը, Ալեք Փիլիպոսը, Արպակսատ Սեղրակյանը։ [49]

ԴԿԴ նյութական աղբյուրներն են նվիրատվությունները, կտակված ժառանգությունները, ավանդները և անդամավճարները։ Դիմանադրկության պատկանող դրամագլխի մեծ մասը գոյացել է կտակների և ավանդների ծևով մնայուն նվիրատվություններից, ինչպես նաև պարզ նվիրատվություններից։ Այս ամենը հնարավորություն է ընձեռել ԴԿԴ-ին կազմակերպելու սփյուռքահայ երիտասարդության կրթության, ինչպես նաև հայկական դպրոցներին նյութական օժանդակություն տրամադրելու գործը։

«Դայ կրթական հիմնարկությունը» Դայաստանում սկսել է գործել 1988-ի Սպիտակի աղետակի երկրաշարժից հետո։ 1994-ին բացվեց ԴԿԴ մասնաճյուղը Երևանում։ Նրա գործունեության հիմնական ուղղություններից էին հայրենիքում կրթական ծրագրերի միջոցով երեխանների կրթության գործի կազմակերպումն ու ուսման նպաստավոր պայմանների ստեղծումը, դպրոցների կառուցումը և վերանորոգումը։[50] Դեսագա տարին ԴԿԴ մասնաճյուղի միջոցով Դայաստանում վերանորոգվել և կառուցվել են տասնյակ դպրոցներ։

Արցախում մեծ թիվ էին կազմում այն դպրոցները, որոնք ունեին վերանորոգման կարիք։ Կարևորելով նատաղ սերնդի կրթության գործը՝ ԴԿԴ 1999 թվականից սկսեց գործել ԼՂԴ-ում կառուցելով և վերանորոգելով մի քանի տասնյակ դպրոցներ։[51]

«Դայ կրթական հիմնարկություն»-ը մեծ ուշադրություն է դարձել նաև հանրապետության ազատագրված շրջանների դպրոցաշինությանը և տարբեր կրթօջախների վերանորոգմանը։ Դիմանարկության ՀՀ մասնաճյուղի և հովանավորների ֆինանսավորմամբ իրականացվել են ԼՂԴ Շահումյանի շրջանի Զարեքտար, Զուար, Եղեգնուտ, Դադիվանք, Նոր Մանաշիդ, Քաշարայի շրջանի ք. Կովսականի, Դայթաղ, Սովետսաշեն, Դարար, Աղավնատուն, Դիմանաշեն, Դակ, Դիցմայրի, Դակարի(Մարաթուկ), Կերեն, Չորախաչ, Տիգրանավան, Վարդուտ, Մշենի գյուղերի դպրոցների և ք. Բերձորի գիշերօթիկ դպրոցի վերանորոգումը և կառուցումը։[52] ԴԿԴ իրականացրել է նաև Քաշարայի շրջանի Վարդուտ գյուղի դպրոցի բակի բարեկարգման[53], Քարենքահ գյուղի երիտասարդական տան շենքի վերանորոգման աշխատանքները։[54] Բացի այդ ամենից հիմնարկությունը Արցախում կառուցված և վերանորոգված դպրոցներին տարեկան մեկ անգամ տրամադրում է գրենական պիտույքներով լի ծանրոցներ։

ԴԿԴ ծրագրերից է ՀՀ և Արցախի պետական համալսարանների ուսանողներին կրթարոշակի տրամադրումը ուսման ամբողջ վարձը վճարելու համար։ Կրթարոշակի տրամադրման չափանիշներն են անապահով ընտանիքների, միայնակ ծնողների երեխանները, մարգերի բնակիչները, Արցախյան ազատամարտիկների զավակները և բարձր առաջադիմություն ունեցողները։ Քանի դեռ ուսանողը պահպանում է բարձր առաջադիմություն, նրա ֆինանսական կարգավիճակը չի փոխվում, և նա, կատարելով համապատասխան համայնքային ծառայություն, շարունակում է ԴԿԴ-ի կողմից հաջորդ ուսումնական տարվա համար նույնպես կրթարոշակ ստանալ։

Այս յուրահատուկ ծրագիրը մեկնարկել է 2007 թվականին և հաջողությամբ իրականացվում է մեծահոգի հովանավորների շնորհիվ, որոնք տարեկան 1000-ական դոլար են նվիրաբերում յուրաքանչյուր ուսանողի համար։[55] Կան հովանավորներ, որոնք ֆինանսավորում են կրթարոշակի ծրագրի մեջ մտնող մի քանի ուսանողների։ Ծնորհիվ այս ծրագրի մի քանի տասնյակ հայ երիտասարդներ կարողացել են ստանալ բազորագույն կրթություն և իրենց ներդրումն ունենալ հայրենիքի բարգավաճմանը։

Քաշարայի շրջանում դպրոցաշինության և այլ ծրագրերի իրականացման գործում իր կարևոր դերն ունի «Դայենասեր» բարեգործական կազմակերպությունը։ Այն

## ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2019

իհմնադրվել է 2011 թվականին ԱՍՍ Գլենդել քաղաքում, ամուսիններ Ստեփան Սարգսյանի և Նելլի-Շուշի Մարտիրոսյանի նախաձեռնությամբ: Կարևորելով շրջանի կրթության բնագավառը կազմակերպությունը ամերիկահայ բարերարների ֆինանսական օժանդակությամբ բարեգործական աշխատանքներն սկսեց դպրոցաշխնությունից:

Քաշաթաղի շրջանի Լեռնահովիտ համայնքը գտնվում է Աղավնու և Ղոչանց գետերի ջրամագաղացի սարահարթում Բերձոր շրջկենտրոնից մոտ 70 կմ հյուսիս, 2 հազար մետր բարձրության վրա: Կազմված է երեք գյուղերից՝ Լեռնահովիտ, Ապիտակաջուր և Շրվական: Ղամայնքի ոչ բարվոր վիճակում գտնվող դպրոցը գործում էր Լեռնահովուում: «Հայրենասեր» կազմակերպության համահիմնադիր ամուսիններ Ստեփան Սարգսյանը և Նելլի-Շուշի Մարտիրոսյանը կազմակերպեցին դրամահավաքը, նախաձեռնեցին շենքի վերակառուցումը և այն շահագործման հանձնեցին 2014թ. ամռան վերջին: Շենքը ամբողջությամբ վերափոխվել է և աչքի է ընկնում իր գեղեցկությամբ, հարմարավետությամբ: Միջնակարգ կրթօջախը կրում է բարերարներ Միսաք և Ազնիկ Տատրյանների անունը:[56] Այս դպրոցը են հաճախում նաև Շրվական և Ապիտակաջուր գյուղերի դպրոցականները:

Շրջանի արդաքամերձ Մուշ և Ալաշկերտ գյուղերը փուլած են Ողջի գետի աջափնյա հարթություններում Միջնավան-Կովսական քաղաքների միջև: Նշված գյուղերի դպրոցակամները սովորում էին Ալաշկերտում գործող երկու հարմարեցված մասնաշենք ունեցող դպրոցում, որը գտնվում էր վթարային վիճակում: Այս գյուղերի բնակչության իր աջակցությունը ցուցաբերեց «Հայրենասեր» կազմակերպությունը, որի ֆինանսավորմանը 2017թ. ամռանը շահագործման հանձնվեց Ալաշկերտ-Մուշ գյուղական համայնքների միացյալ դպրոցի շենքը Մուշում: Կրթօջախն ունի 12 դասասենյակ, դահլիճ, տնօրենի աշխատասենյակ, ուսուցչանոց, գրադարան, ՆՉՊ դասասենյակ, նկուղային հարկում ապաստարան և այլն: [57]

2017թ. ամռանը Արցախի Հանրապետության կառավարության աջակցությամբ շրջարակագմի և «Հայրենասեր» կազմակերպության օժանդակությամբ իհմնանորոգվել է Խշանաճոր գյուղի դպրոցի եռահարկ շենքը: [58] Կազմակերպության կողմից գյուղի նորակառույց Ազատամարտիկների բաղամասում կառուցվել է մարզադաշտ, որը կրում է 2016թ. ապրիլյան պատերազմի հերոս նահատակ Անդրանիկ Զոհրաբյանի անունը:

«Հայրենասերը» վերջին երկու-երեք տարիների ընթացքում Քաշաթաղի շրջանում իհմնանորոգել է Ղամ գյուղի դպրոցի շենքը, Յերիկ գյուղում կառուցել նոր դպրոց, որը կրում է ապրիլյան պատերազմի ժամանակ մարտիրոսված զինվոր, Ազգային հերոս Ուռերտ Արացյանի անունը: [59] Դպրոցն ունի լուսավոր դասասենյակներ, գրադարան, համակարգչային կարինետ, մարզադահլիճ, ՆՉՊ կարինետ և մեծ բակ:

Կազմակերպության շնորհիվ իհմնանորոգվել է նաև Վուրգավան գյուղի միջնակարգ դպրոցի շենքը, բարեկարգվել ու ցանկավաստվել տարածքը: Շենքի մի հատվածն էլ հատկացվել է համայնքապետարանին և բուժկետին: [60] Դպրոցի հինգ դասարաններում սովորում է 26 աշակերտ, աշխատում 12 ուսուցիչ: Գործում է «Արնաք» ինժեներական լաբորատորիա, որը իհմնական է բարերարներ Մարկ և Թալար Բերերյանների նվիրատվության և Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության (ԻՏՀՀՈ) միջոցների շնորհիվ: 2017թ. հունվարին ԻՏՀՀՈ-ի ներկայացուցիչները դպրոցին տրամադրեցին երկու համակարգիչ, մեկ եռաշակ տպիչ, մեկ շաղափող հաստոց, ռոբոտ-կոնսուլտուր և լաբորատորիային անհրաժեշտ այլ պիտույքներ, բացի այդ աշխատանքներին և ուսուցիչներին բացատրեցին եռաշակ տպիչի և շաղափողի հաստոցի աշխատանքը, հնարավորությունները:

«Արնաք» ինժեներական լաբորատորիա «Հայրենասերը» իհմնեց իր կողմից հիմնանորոգված Բերձորի Վ. Թեքեյանի անվան հմ. 1 միջնակարգ դպրոցում: «Մեծ ցանկություն կար,- նշում է «Հայրենասեր» կազմակերպության համահիմնադիր Ստեփան Սարգսյանը, որ Քաշաթաղում լինի այն ամենը, ինչ որ կա երևանում, տվյալ դեպքում այս տեխնոլոգիաները երևանի դպրոցներում չկան: Մեծ ցանկություն, որ Քաշաթաղում

## ՄԵԽՐՈԴ ՄԱՀՍՈՅՑ ՀԱՍԱՏԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2019

ապրող ոչ մի երեխա չնտածի, թե ապրելով Քաշաթաղում կտրված է ավելի լավ ուսում ստանալու հնարավորությունից: Այս լարորատորիան հենց այդ տրամարանության մեջ է: Մեծ հույս ունենք, որ սա թույլ կտա, որ աշակերտները ծրագրավորողի կրթություն ստանան»:[61]

«Հայրենասերն» իրականացրել է նաև այլ կարևոր ծրագրեր: Նրա կողմից Բերձորում և այլ համայնքներում կառուցվել են ապաստարաններ, հիմնանորոգվել են Բերձորի քաղաքապետարան բարձրացող աստիճանները, որոնք ծառայում են նաև քաղաքային գրադարաններ և երկրագիտական բանգարաններ:[62] Նախատեսվում է վերակառուցել Բերձորի մարզադպրոցի և կառուցել արտակարգ իրավիճակների ծառայության Քաշաթաղի շրջանային բաժնի շենքերը:

«Հայրենասեր» կազմակերպության համահինադիր ամուսիններ Ստեփան Սարգսյանը և Նելլի-Շուշի Մարտիրոսյանը 2016թ. բնակություն են հաստատել Բերձորում: 2018թ. Ստեփան Սարգսյանը ընտրվել է Քաշաթաղի շրջարազամի ղեկավար:

Արցախին օգնելու գործում մեծ ներդրում ունեն այդուոքահայ անհատ բարերարները, որոնք նվիրատվությամբ, ինչպես նաև առանձին, համագործակցելով հիմնադրամների, բարեգործական կազմակերպությունների, միությունների և ԼՂՀ կառավարության հետ, իրականացնում են բազմաթիվ ծրագրեր՝ այդ թվում ազատագրված շրջանների զարգացման և վերաբնակեցման գործում:

Ժողովրդագրական աճը եղել և մնում է Արցախի կառավարության առաջնահերթ ծրագրերից մեկը, և այդ մակարդակը բարձրացնելու համար անց են կացվում տարաբնույթ ծրագրեր, որոնց աջակցում են տարբեր երկրներից մեր հայրենակից բարերարները: Արցախին օգնության օրինակ է ծառայում 1999թ. Սիմոն Այնեջյանի կողմից ստեղծված «Կիպրահայերը» կայքի գործունեությունը: Սիմոն Այնեջյանը երազում էր Արցախում նոր գյուղ հիմնել: Ինչպես պատմում է նա, գյուղի հիմնադրման համար դրամահավաք կազմակերպելու առաջարկով սկզբից նամակ է ուղարկել 50 հասեատերերի, այնուհետև ավելացրել է հասեատերերի թիվը: Արդյունքում իր հավաքած նվիրատվություններով հաջողվել է ԼՂՀ Քաշաթաղի շրջանում հիմնել Դիցմայր գյուղը: Նրա ակտիվ գործունեության շնորհիվ Կիպրոսից Արցախ են ուղևորվել կամավորականների խմբեր, որոնք մեկ տարվա ընթացքում մասնակցել են շինարարական աշխատանքներին: Կազմակերպվել է մեկ այլ դրամահավաք ևս՝ գյուղի ջրամատակարման հարցը կարգավորելու համար: «Կիպրահայերը» կայքն առցանց հարթակ է դարձել Արցախի օգնությանն ուղղված առավել լայնամասշտար գործունեության կազմակերպման համար: [63]

Հահումյանի շրջանի քնարավան համայնքը հիմնադրվել է 2002 թվականին սփուռքահայ բարերար Կարապետ Յարությունյանի ֆինանսական միջոցներով: Յամայնքի անունը դրվել է ի հիշատակ բարերարի կոնց քնար Յարությունյանի: Յամայնքի տարածքը կազմում է 5053,35 հա: Յամայնքն ունի միանման 15 բնակելի տուն, դպրոց կառուցվել է 2004-ին: [64] Յամայնքն ունի կահավորված համայնքապետարան և բուժկետ: Բնակչությունը հիմնական մասն ապահովված է աշխատանքով, գրադպուտ են գյուղատնտեսությամբ, ինչպես բոլոր համայնքներում, այստեղ նույնպես առկա է բնակելի տների կառուցման խնդիրը:

«Ստեփանակերտ-Գորիս» ավտոմայրուղու շահագործման և պահպանման աշխատանքներն իրականացվում են «Վահե Կարապետյան ծանշահագործում» ՓԲԸ-ի կողմից ամերիկահայ մեծ բարերար Վահե Կարապետյանի ֆինանսավորմանը: [65]

Ծվեցարահայ գործարար, բարերար Վարդան Սերմաքեշի ֆինանսական օժանդակությամբ Քաշաթաղի շրջանի Յագարի և Աղավն գետերի խառնման տեղանքում կառուցվում է ջրամքար, որը կնապատի շրջանի գյուղատնտեսության, գյուղական բնակավայրերի զարգացմանը և Ժողովրդագրական իրավիճակի բարեկամանը:

Սփուռքահայ բարերարներն իրենց բարեգործական ծրագրերում մեծ ուշադրություն են դարձնում գյուղական բնակավայրերում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը, որը մատադ սերնդի դաստիարակության առանցքային բաղադրիչներից է:

## ՄԵՐՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2019

մեկն է: Կապանի ոսկու կոմբինատի տնօրեն կանադահայ Յրաչ Զաքրայանի հովանափորությամբ Կովսական քաղաքի Թաթուլ Կրպեյանի անվան միջնակարգ դպրոցի հարևանությամբ կառուցվել է ռազմանարգական խաղահրապարակ՝ տարբեր մարզասարքերով, որտեղ աշակերտներից բացի կարող են մարզվել նաև քաղաքի երիտասարդները: [66]

Կատարվել է միջինավոր դոլարների ներդրում, շնորհիվ որի բազմաթիվ խնդիրներ են լուծում ստացել: Այդ ամենով համերձ համահայկական նշանակություն ունեցող ազատագրված տարածքներում ենքն կան չլուծված խնդիրներ: Առաջնային նշանակություն ունեն բնակարանաշինության, գազաֆիկացման, խմելու և ոռոգման ջրի, ծանապարհների բարեկարգման, առողջապահության, դպրոցաշինության, համացանցի անցկացման հիմնախնդիրները: Առանց ազատագրված շրջանների՝ հնարավոր չեն Արցախի Քանրապետության զարգացումը և անվտանգության ապահովումը:

Ներկայում վերոնշյալ հիմնադրումները, սիյուռքահայ կազմակերպությունները և անհատ բարերարները շարունակում են իրենց ազգանվեր բարեգործական գործունեությունը նպաստելով Արցախի Քանրապետության զարգացման գործին: Այս ամենը նյայաստան-Արցախ-Սփյուռք համագործակցության փայլուն օրինակ է:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ԼՂՀ պետարխիվ, Ֆ.180, գ.1, կ-9, պ.մ.42, թ.222:
2. Բալայան Վ., Դրվագներ արցախիայության ազատագրական պայքարի և պրոտականակերտման պատմության, Ստեփանակերտ, 2012, էջ 333:
3. ԼՂՀ պետարխիվ, Ֆ.180, գ.1, կ-9, պ.մ.42, թ.222:
4. «Հայաստան» համահայկական հիմնադրամ 2016, Եր., 2017, էջ 10:
5. Նույն տեղում, էջ 40:
6. «Հայաստան» համահայկական հիմնադրամ 2012, Եր., 2013, էջ 10:
7. Մինասյան Է., Վարդանյան Ա., Հայրենիք-Սփյուռք առնչությունները ՀՀ անկախության տարիներին (1991-2009թթ.), Ստեփանակերտ, 2010, էջ 107-108:
8. Արքահամյան Հ., Վարդանյան Ա., «Հայաստան» հիմնադրամի ներդրումը ԼՂՀ - զարգացման գործում, Սեսրու Մաշտոց համալսարանի լրատու, Եր., 2012, հմ.1 (12), էջ 6:
9. Մինասյան Է., Վարդանյան Ա., նշվ., աշխ., էջ 108:
10. «Ազատ Արցախ», 3 օգոստոսի, 2017:
11. «Հայաստան» համահայկական հիմնադրամ 2013, տարեկան հաշվետվություն, Եր., 2014, էջ 43:
12. ԼՂՀ պետական արխիվ, Ֆ.180, գ.1, կ-11, պ.մ.50, թ. 75:
13. «Հայաստան» համահայկական հիմնադրամ 2014, Եր., 2015, էջ 74:
14. «Ազատ Արցախ», 25 մայիսի 2018:
15. «Հայաստան» համահայկական հիմնադրամ 2016, Եր., 2017, էջ 51:
16. «Հայկական Սփյուռք», տարեգիրը 2014, Երևան, 2015, էջ 113:
17. Մինասյան Է., Վարդանյան Ա., նշված աշխ., էջ 111:
18. ԼՂՀ պետական արխիվ, Ֆ.180, գ.1, կ-13, պ.մ. 65, թ 11:
19. «Հայաստանի Քանրապետություն», 5 սեպտեմբերի, 2007:
20. Նույն տեղում:
21. Վարդանյան Ա., «Թուքենյան» բարեգործական հիմնադրամի (ԹԲՀ) գործունեությունը Արցախում, «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես Բ, (գիտական հոդվածների ժողովածու), Երևան, 2013, էջ 78:
22. Նույն տեղում:

## ՄԵՍՐՈՒԹ ՄԱՀԾՆԵՑ ՀԱՍԱՏԱՄԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2019

23. «Մերան», ԼՂՅ Քաշաթաղի շրջանային թերթ, թիվ 14 (135) հուլիս, 2015:
24. «Ազատ Արցախ», 6 հոկտեմբերի, 2018:
25. ԼՂՅ պետական արխիվ, ֆ. 180, գ. 1, կ-11, պ.մ. 50, թ. 37, 71:
26. «Նոր Շահումյան» ԼՂՀ Շահումյանի շրջվարչակազմի պաշտոնաթերթ, թիվ 20 (139), 16-31 հոկտեմբերի 2012:
27. «Հայաստանի Հանրապետություն», 6 սեպտեմբերի 2016:
28. «Ազատ Արցախ», 16 սեպտեմբերի 2014թ.:
29. «Մերան», ԼՂՀ Քաշաթաղի շրջանային թերթ, թիվ 18 (115) սեպտեմբեր 2014:
30. «Ազատ Արցախ», 16 հուլիսի 2013:
31. ԼՂՀ պետական արխիվ, ֆ. 180, գ.1, կ-9, պ.մ. 43, թ.173:
32. «Մերան», թիվ 7(80), ապրիլ 2013:
33. «Նոր Շահումյան», 16-30 ապրիլի 2013, հմ. 8 (151):
34. «Բարեգործ», «Գուրգեն Մելիքյանի Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» պաշտոնաթերթ, հուլիս-օգոստոս 2018, հմ.3(40), էջ 2,11:
35. «Մերան», թ.7(80), ապրիլ 2013:
36. «Բարեգործ», ապրիլ 2018, հմ.2(39), էջ 6:
37. «Ազատ Արցախ», 2 փետրվարի, 2012:
38. «Ազատ Արցախ», 12 նոյեմբերի 2013:
39. «Ազատ Արցախ», 24 սեպտեմբերի 2015:
40. «Ազատ Արցախ», 16 սեպտեմբերի 2014:
41. «Ազատ Արցախ», 24 սեպտեմբերի 2015:
42. «Ազատ Արցախ», 18 հունվարի 2018:
43. «Մերան», ԼՂՀ Քաշաթաղի շրջանային թերթ, թիվ 17 (138) սեպտեմբեր 2015:
44. Նոյն տեղում:
45. Ծրագիր-կանոնագիր Հայ օգնութեան միութեան, բարեկինուած 1998-ի համահայկական պատգամավորական ժողովին, 1998թ. հոկտեմբեր, էջ 1:
46. «Հայկական Սփյուռք», տարեգիրը 2015, Երևան, 2016, էջ 94:
47. Հարիբամեայ Յուշամատեան Հայ օգնութեան միութեան 1910-2010, Պուառն, 2010, էջ 331:
48. «Ապառաժ», 7-31 հունվարի, 2013:
49. «Հայ Սփյուռք» համրագիտարան, Եր., 2003, էջ 62:
50. Հայ կրթական հիմնարկություն, Գլենդել, 2005, էջ 12:
51. Վարդանյան Ա., Հայ կրթական հիմնարկության գործունեությունը հայրենիքում, Մեսրոպ Մաշտոց համալսարանի լրատու (գիտական հոդվածների պարբերական ժողովածու), Եր., 2016, էջ 215-216:
52. Այս նյութերը մեզ է տրամադրել ՀՀ-ում ՀԿՀ մասնաճյուղի գործադիր տնօրեն՝ Ստեփան Նալբանդյանը:
53. ԼՂՀ պետական արխիվ, ֆ. 180, գ. 1, կ-11, պ.մ. 50, թ.56:
54. Նոյն տեղում, թ. 25-26:
55. Armenian Educational Foundation. Scholarship Program, march 2015, p. 1-2.
56. «Ազատ Արցախ», 18 սեպտեմբերի, 2014:
57. «Ազատ Արցախ», 8 օգոստոսի, 2017:
58. «Ազատ Արցախ», 10 փետրվարի, 2018:
59. «Մերան», թիվ 17-18(162-163), սեպտեմբեր 2016:
60. «Մերան», թիվ 18(139), սեպտեմբեր, 2015:
61. «Ազատ Արցախ», 17 հունվարի, 2017:

## **ՄԵՄՐՈՊ ՄԱՀԾՏՎԵ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՑՈՒ 2019**

62. «Ազատ Արցախ», 8 հունիսի, 2017:
63. «Ազատ Արցախ», 17 հունվարի, 2019:
64. «Նոր Շահումյան», 16-31.03.2013,հմ.6(149):
65. ԼՂՀ պետական արխիվ,ֆ.180,գ.1,կ-11,պ.մ.50,թ.33,տես նաև, ֆ.180,գ.1,կ-10,պ.մ.45,թ.69:
66. «Ազատ Արցախ», 20 սեպտեմբերի, 2014:

### **ԱՄՓՈՓՎԳԻՐ**

**Յիմնադրամների, սփյուռքահայ բարեգործական կազմակերպությունների և  
անհատ բարերարների աջակցությունը Արցախի ազատագրված տարածքների  
զարգացման գործում  
Արարատ Վարդանյան**

Հետպատերազմյան տարիներին հնարավորություն ստեղծվեց իրականացնել պատերազմից խիստ տուժած և ազատագրված տարածքների վերաբնակեցման, ավերված տնտեսության և այլ ոլորտների վերականգնման ու զարգացման բազմաթիվ ծրագրեր: Բայց և այնպես Արցախի Հանրապետությունն ի վիճակի չեղ սուր պետական միջոցներով լուծելու իր առջև ծառացած բոլոր խնդիրները: Լինելով չճանաչված պետություն՝ իր սոցիալ-տնտեսական, նշակութային, կրթական, առողջապահական և այլ ոլորտների զարգացման համար գրկված է միջազգային ֆինանսական կազակերպություններից վարկեր ստանալու հնարավորությունից: Այդ առումով անգնահատելի է հիմնադրամների, սփյուռքահայ բարեգործական կազմակերպությունների օգնությունը: Արցախին օգնելու գործում մեծ ավանդ ունեն սփյուռքահայ անհատ բարերարները, որոնք իրականացնում են բազմաբնույթ ծրագրեր:

### **РЕЗЮМЕ**

**Содействие фондов, диаспоральных благотворительных организаций и бенефициаров  
развитию освобожденных земель Арцаха  
Аракат Варданян**

**Ключевые слова:** Республика Арцах, освобожденные территории, благотворительность, фонды, благотворительные организации, индивидуальные спонсоры (бенефициары), программы переселения, социально-экономические, здравоохранительные, культурно-образовательные программы.

Послевоенный период предоставил возможность для осуществления многочисленных программ по переселению в наиболее пострадавшие и освобожденные земли, а также по восстановлению и развитию разрушенной экономики и других сфер. Но и тогда Республика Арцах была не в состоянии решить все существующие проблемы, используя только государственные средства. Будучи непризнанным государством, республика лишена возможности получать кредиты на развитие экономической, социальной, культурной, образовательной, здравоохранительной и других сфер от международных финансовых организаций. Следовательно, поддержка Армянской диаспоры, благотворительных организаций и фондов является неоценимой. Велика роль отдельных спонсоров, благодаря финансовой поддержке которых претворились в жизнь многие благотворительные программы.

SUMMARY

**Assistance of Funds, Diaspora Charitable Organizations and Beneficiaries to the Development of the Liberated Lands of Artsakh**  
**Ararat Vardanyan**

**Keywords:** The Republic of Artsakh, liberated territories, charity, foundations, charitable organizations, individual sponsors (beneficiaries), resettlement programs, socio-economic, health, cultural and educational programs.

The post-war period provided an opportunity to implement numerous programs to resettle the severely damaged and liberated lands, as well as to restore and develop the destroyed economy and other areas. But even then, the Republic of Artsakh was not able to solve all the existing problems using only state funds. Being a non-recognized state, the Republic of Artsakh is deprived of the opportunity to receive loans for the development of economic, social, cultural, educational, health and other spheres from international financial organizations. Consequently, the support of the Armenian Diaspora, charities and foundations is invaluable. The role of individual sponsors, who carry out a number of charitable programs in Artsakh, is great. Many charitable programs have been implemented due to their financial support.